# ՆՈՐ ՆԻՒԹԵՐ ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ

## Ա.

### Պատմութիւն մեծի րաբունապետին Թումայի, զոր արարեալ է Կիրակոսի բանասէր վարդապետի.

*Ի թուականութե՟ս հայոց մեծաց ՊՂ երորդի Ե. երորդի եղև վախճան մեծ վարժապետին երիցս երանելոյն սուրբ հօրն մերոյ երջանիկ և փառաւոր րաբունոյն, խորհմաց հռետորին համանման անյաղթ փիլիսոփային՝ Դաւթի սոփեստոսին իմաստասէր հայկազեան սեռին։ Վասն որոյ ի վերջին ժամանակս սա միայն գտաւ ի մէջ ամենայն վարդապետաց իբրև զարեգակն ի մէջ աստեղաց ամենայն առաքինութեամբ զարդարեալ, տեսականաւն և գործնականաւն և գիտնականաւն։ Զի ուսեալ էր զերկոտասան մասունս իմաստասիրութեան. զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն և զամենայն իմաստս հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան է գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն*

---

2) Բ. Թումայից Դ. Թօմայի Բ. չիք է      3) ԱԴ կիրակոս

4) Բ. Թըվականութեանս Գ. Թվակ.. Դ. Գ. երրորդի

5) ԱԲԵ. վախճան Բ. վարժապ՟տ Ա. երանեալ Բ. հօր

6) Ա. յերջանիկ Բ. երջանիկ· Ա. փառաւորեալ Բ. րաբոյն Ե. հռետորին

7) Ա. խորհմաց Բ. անաղթ ԱԳԴԵ. փիլիսոփային. Բ. սոփեստիոսին Ա. յիմաստասէր Դ. իմաստասերի

8) Ա. հայկազեանս սեռի Բ. հայկազեան սէռիս Գ. հայկազան սեռի Դ. հայկազեան սեռի. Ա. որ ի վերջին Դ. ժամանակիս Բ. սայ

11—14) Գ. չիք եւ գիտնական 12) Ա. զբնաբանականն. ԱԲ. զներքի սող ի վերն ? ասա, զվերին ի ներքին. Բ. զներքի սող ի վերն ասայ, զվերին ի ներքին—գրիչների ծանօթութիւններ են, յետոյ բնագրի մէջ մտած։ ԱԲ. զտնտեսականն եւ զքաղաքականն, զթուականն (Բ Թ՟վկնն) զերաժշտականն (Բ. զերաժշտակն), զուսումնականն, զ՟ածաբանականն (Ա. զ՟ածակականն) եւ զբարոյականն (Ա. զբարոյականն, զերկրաչ..

15) Դ. զաստեղաբաշխականն. Ա. յիմաստս

16) Բ. հնճրո Ե. փիլիսոփաու՟Թե

17) Ա. Սահմանքն Պորփիւրի. Ա. ստորոգութին